# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 նոյեմբերի 2023 թվականի N 2077 - Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 17-Ի N 185-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի փետրվարի 17-ի «Պետական (մունիցիպալ) գնումների համար առանձին տեսակի ապրանքների ծագման երկրի որոշման կանոններին համապատասխան Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների արդյունաբերական ապրանքների եվրասիական ռեեստրի ձևավորման, վարման և ստուգման հարցերով լիազոր մարմին սահմանելու մասին» N 185-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Պետական (մունիցիպալ) գնումների համար առանձին տեսակի ապրանքների ծագման երկրի որոշման կանոններին համապատասխան փորձաքննության

ակտի տրամադրման կարգն ու վճարի չափը, Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների արդյունաբերական ապրանքների եվրասիական ռեեստրի ձևավորման, վարման և ստուգման հարցերով լիազոր մարմին սահմանելու մասին».

2) նախաբանը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Ղեկավարվելով «Արդյունաբերական քաղաքականության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 5.1-ին կետով, «Առևտրաարդյունաբերական պալատների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի «ժ» կետով և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2020 թվականի նոյեմբերի 23-ի N 105 որոշման 2-րդ կետի և պետական (մունիցիպալ) գնումների համար առանձին տեսակի ապրանքների ծագման երկրի որոշման կանոններով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.».

3) 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«3. Հաստատել, որ՝

1) լիազոր մարմինն իրականացնում է պետական (մունիցիպալ) գնումների համար առանձին տեսակի ապրանքների ծագման երկրի որոշման կանոններով նախատեսված՝ Հայաստանի Հանրապետությունում արդյունաբերական արտադրանքի արտադրության պայմանների, արտադրական և տեխնոլոգիական գործողությունների կատարման փորձաքննություն, որի արդյունքների հիման վրա ձևակերպվում է փորձաքննության ակտը.

2) պետական (մունիցիպալ) գնումների համար առանձին տեսակի ապրանքների ծագման երկրի որոշման կանոններով նախատեսված՝ Հայաստանի Հանրապետությունում արդյունաբերական արտադրանքի արտադրության պայմանների, արտադրական և տեխնոլոգիական գործողությունների կատարման փորձաքննությունը և արդյունաբերական ապրանքը ռեեստրում ընդգրկելու նպատակով տրված փորձաքննության ակտի, ապրանքի ծագման երկրի հավաստագրի («CT-1»)

տրամադրման կարգը և վճարի չափը սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի N 1772-Ն որոշմամբ.

3) փորձաքննության ակտը ձևակերպվում է համաձայն N 1 հավելվածի, անհրաժեշտության դեպքում՝ փորձաքննության ակտը կարող է տրամադրվել նաև ռուսերեն.

4) փորձաքննության ակտը կարող է ձևակերպվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան էլեկտրոնային թվային ստորագրությամբ վավերացված էլեկտրոնային փաստաթղթի տեսքով.

5) փորձաքննության ակտը տրամադրվում է ապրանքների անորոշ ծավալի (քանակ) համար և համարվում է ապրանքի ծագման փաստաթուղթ՝ տրամադրման օրվանից սկսած 2 տարի ժամկետով.

6) արդյունաբերական ապրանք արտադրողները փորձաքննություն անցկացնելու և փորձաքննության ակտ ստանալու համար դիմումը լիազոր մարմին են ներկայացնում՝ համաձայն N 2 հավելվածի.

7) արդյունաբերական ապրանքը ռեեստրում ընդգրկելու նպատակով տրամադրված ապրանքի ծագման երկրի հավաստագիրը («CT-1») տրամադրվում է ապրանքների անորոշ ծավալի (քանակ) համար, որի գործողության ժամկետը սահմանվում է 1 տարի՝ սկսած այն տալու օրվանից.

8) փորձաքննության ակտի և (կամ) դրանում պարունակվող տեղեկատվության հավաստիության հետագա ստուգումն իրականացվում է լիազոր մարմնի կողմից՝ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների ստուգման իրավասություն ունեցող մարմինների դիմումների հիման վրա՝ արդյունաբերական ապրանքներ արտադրողների կողմից ներկայացված տեղեկատվությունը փորձաքննության ակտում ներառված տեղեկատվության հետ համեմատելու միջոցով.

9) արդյունաբերական ապրանքներ արտադրողները հինգ աշխատանքային օրվա ընթացքում լիազոր մարմին են ներկայացնում փորձաքննությունների

ակտերի և (կամ) դրանցում պարունակվող տեղեկատվության հավաստիության ստուգման համար անհրաժեշտ տեղեկատվությունը.

10) փորձաքննությունների ակտերի և (կամ) դրանցում պարունակվող տեղեկատվության հավաստիության ստուգման արդյունքների հիման վրա լիազոր մարմինը Եվրասիական տնտեսական միության անդամ պետության ստուգման իրավասություն ունեցող մարմնի դիմումն ստանալու օրվանից տասն աշխատանքային օրվա ընթացքում ստուգման արդյունքների մասին հիմնավորված պատասխան է ներկայացնում այդ մարմնին.

11) փորձաքննության ակտի և (կամ) դրանում պարունակվող ոչ հավաստի տեղեկատվության բացահայտման դեպքում լիազոր մարմինը բացահայտման օրվանից ոչ ուշ, քան տասն աշխատանքային օրվա ընթացքում ծանուցում է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությանը փորձաքննության ակտում համապատասխան փոփոխություններ կատարելու կամ այն չեղարկելու և Եվրասիական տնտեսական հանձնաժողովին ռեեստրում համապատասխան արդյունաբերական ապրանքի և դրա արտադրության մասին գրանցման չեղարկման մասին դիմում ներկայացնելու անհրաժեշտության մասին:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

30.11.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ